

Հայկական գիտահետազոտական հանդույց Armenian Research & Academic Repository



Առևտ աշխատանքն արտանագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասուրյան 3.0» արտանագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենը և տարրելն եղուրը ցանկացած ձևաչափով կամ եղիչով
ձեռփոխել կամ օգտագործել առևտ եղուրը ստեղծելու համար եռը

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material



ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽՈԶԵ

Հիմնուած 1921, Յուլիս 4-ին




20 Յուլիս, 1923
Նիւ Եղրի

614.885

29198

8-89 Օրոշիր լրացնացիր
հայ Կոմիտիպ համար: 5m



614.885
δ - 89

ԱՐԵՎԱԿԱՆ Հ 1987 թ.



ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽՈԶՔ

Հիմնուած 1921, Յուլիս 4-ին



20 Յուլիս, 1923
Նիւ Եռք

1594 356 20198

1924
«ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ՏՊԱՐԱՆ
ՊՈՍԹԸՆ

A 16463

ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ

Հիմնուած 1921, Յուլիս 4-ին

Ա Ն Ռ Ի Ն

1.— Հայ կարմիր Խաչը Ամերիկայի մէջ կազմուած է միութեամբ Հայ Ազգային և Հայաստանի կարմիր Խաչերու :

«Ամերիկայի Հայ կարմիր Խաչը պիտի ենթարկուի բոլոր Մեծ Պետութիւններէ de facto (իրապէս) և de jure (իրաւապէս) ընդունուած Հայ Պետութեան կարմիր Խաչին : Մինչ այդ՝ Ամերիկայի Հայ կարմիր Խաչը իր միջոցներով և կազմական կանոնագրին համաձայն, պիտի օժանդակէ ուր Հայ կարիք կայ» :

Ամերիկայի Հ. Կ. Խաչը կրնայ իր մասնաճիւղերն ունենալ բոլոր հայարնակ վայրերու մէջ կամ դործակցութիւն հաստատել նման վայրերու մէջ արդէն գոյութիւն ունեցող մերազնեայ կարմիր Խաչերու հետ :

Ն Պ Ա Տ Ա Կ

2.— Ամերիկայի Հայ Կարմիր Խաչի նպատակն է, Ամերիկահայ կեանքին մէջ իրականացնելու աշխատիլ՝ Հ. Կ. Խ.-ի սկզբունքներն ու ծրադիրը, զանոնք յարմարցնելով Ամերիկեան միջավայրի առանձնայատուկ պայմաններուն :

3.— Հայ Կարմիր Խաչի գործունէութեան ասպարէզն է .

Ա.— Պատերազմի, համաճարակներու եւ աղէտներու ժամանակ օգնել Հայ բանակներուն եւ Հայ ժողովուրդին, ամէն տեղ, դրամով, հազուստով, մթերքներով, բժշկական եւ առողջապահական այլ եւ այլ միջոցներով :

Բ.— Օգնել վիրաւոր զինուորներուն, սպաննուածներու ընտանիքներուն, եւ սատարել անոնց զաւակներու դաստիարակութեան :

Գ.— Պատրաստել հիւանդապահներ, ըլջուն դարմանատուններ, դեղադործներ, ինչպէս նաև հրատարակել առողջապահական գրքոյկներ եւ տարածել զանոնք :

Դ.— Երկրաշարժէ, սովէ, հեղեղներէ եւ համաճարակ հիւանդութիւններէ տառապող Հայերու եւ անոնց կարօտ ընտանեաց նպաստներ տալ :

Ե.— Հիւանդութեանց բարձման աջակցիլ :

Մ Ի Զ Ո Յ Ն Ե Ր

4.— Հ. Կ. Խաչը իր նպատակին գործադրութեանը համար՝ հասոյթի հետեւեալ աղբիւրները պիտի ունենայ .

Ա. — Մուտքի դրամ,
 Բ. — Անդամավճարներ,
 Գ. — Անհատական կտակներ եւ ամէն կարգի
 նուէրներ :

Դ. — Հանդանակութիւններ, վիճակահանու-
 թիւններ, պաղարներ, հանդէսներ, ներկայացում-
 ներ եւայլն :



ԵՐԵՎԱՆԻ


Կողման՝ պատրիություն,

որ մեջ բարձր պատրիություն և
կարող խնդիր նկարագություն ունի.

Կողմանը և այս կարող խնդիր

կազմակերպ-Ծրագրի որակացուու
թիւնաւորութիւն, և, պահ զայտ գումա-
ռի և ինքնաւորութիւն և այս կարող
խնդիր նկարագություն:

Կողմանը լավա սարսա-
ծուու, լավա ապօն և Հայոց
արքուն:



ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

5.— Ամէն Հայ, առանց կրօնքի, սեռի եւ քաղաքական դաւանանքի խորութեան, կրնայ անդամակցիլ Հայ Կարմիր Խաչի Ամերիկայի Մարմնին, երբ կ'ընդունի անոր ծրագիրն ու կ'ենթարկուի կահոնագրի տրամադրութիւններուն :

ԾԱՆՈԹ.— Անչափահաս անդամները, 18 տարեկանին վար, քուէի իրաւունք չունին :

6.— Հ. Կ. Խաչի անդամներ կը բաժնուին երեք կարգի, Ա. Գործօն, Բ. Պատոյ, Գ. Օժանդակ անդամներ :

Ա. Գործօն անդամ կը նկատուին անոնք, որոնք ուխտ ընելէ եւ մուտքի նուէր տալէ զատ, ամէն տարի կանոնաւորապէս կազմին կը վճարեն առնուազն երկու տոլար կամ եռամսեայ 50 սէնթ անդամասուրք :

Գործօն անդամներ առանց սեռի խորութեան, յարգելով կանոնագրի տրամադրութիւններն կը վայելն ընտրելու եւ ընտրուելու իրաւունք :

Բ. Պատոյ անդամ կը համարուին անոնք՝ որոնք բարոյական եւ նիւթական մեծամեծ զոհողութիւններով կամ մասնակի մեծ զումարներով եւ ար-

ժէքաւոր իրեղէններով նպաստած են ընկերութեանս :

Պատւոյ անդամի տիտղոս ունէ անձի կը տըրուի Ամերիկայի Հ. Կ. Խ.ի Պատգ. Ժողովէն եւ կամ անկէ ընտրուած կեղրոնական Վարչութենէն :

Գ. Օժանդակ անդամ կը կոչուին անոնք՝ որոնք, առանց սեռի խտրութեան, ընկերութեանս նպաստակին համար բարոյական աջակցութիւններ ընելէ զատ՝ յօժարակամ նուէրներով կամ գէթ տարեկան մէկ տուլար վճարելով կը նպաստեն գործին :

ԾԱՆՈԹ. — Պատւոյ եւ Օժանդակ անդամներ անդամական ժողովներու եւ քուէի թէեւ չեն կրնար մասնակցիլ, բայց կրնան առանց քուէի իրաւունքի, ներկայ ըլլալ Հ. Կ. Խաչի այն ժողովներուն, ուր նիւթական, տնտեսական եւ բարոյական հաշուետրութիւն կը կատարուի եւ որոնց մասին կանխար իրենց նամակաւ կամ ծանուցմամբ իմաց տրուած է:

Կ Ա Զ Մ

7. — Առնուազն 5 անդամներ կրնան կազմել Հ. Կ. Խ. ի Մասնաճիւղ մը, որ կը վաւերացուի կեղր. Վարչութեան կողմէ :

8. — Ամէն Մասնաճիւղ կ'ունենայ իր վարչութիւնը, երեքէն հինգ անդամներէ, նայելով իր անդամներու թուին :

9. — Վարչութիւնը կ'ընտրուի անդամական ժողովին մէջ, ձայներու մէծամասնութեամբ, գաղտնի քուէով եւ վեց ամսուայ կամ մէկ տարուան համար, պայմանաւ որ ժողովին ներկայ ըլլան անդամներու մէծամասնութիւնը եւ ընտրութեան մասին

կանխաւ լուր տըռուած ըլլայ բոլոր անդամներուն :

ԾԱՆՈԹ .— Վարչութեան անդամները վերընտրելի են :

10 .— Նկատի ունենալով որ Հ. Կ. Խաչը աւելի կանացի կազմակերպութիւն մ'է, վարչական անդամներու երկու-երրորդը պէտք է բաղկանայ տիելիններէ եւ օրիորդներէ :

11 .— Վարչութիւնը ինք կ'ընտրէ իր դիւանը — ատենապետ, ատենադպիր եւ գանձապահ, եւ կամ անոնք զատ զատ կ'ընտրուին անդամական ընտրական ժողովին մէջ : Վարչութիւնը հաւաքարար պատասխանատու է Մասնաճիւղին գործունէութիւններուն համար :

12 .— Քնտրութեան արդիւնքը անմիջապէս կը տեղեկադրուի կեդր . Վարչութեան :

13 .— Մասնաճիւղերու վարչութիւնները պարտաւոր են ամէն 6 ամիս իրենց հաշուեկշիռը եւ գործունէութեան տեղեկադիրը դրկել կեդր . Վարչութեան :

14 .— Մասնաճիւղեր պէտք է անուղղակիօրէն ջանան սերտ յարաբերութիւն պահել Ամերիկեան կարմիր Խաչի տեղական մարմիններուն հետ եւ օդառուիլ անոնց ընձեռած օժանդակութիւններէն :

15 .— Մասնաճիւղեր որեւէ ձեռնարկի մասին նախօրօք տեղեկացնելու են կեդր . Վարչութեան եւ ստանալու են անոր հաւանութիւնը :

16 .— Մեծ ձեռնարկներու շուրջ մօտաւոր վայրերու Մասնաճիւղեր կրնան գործակցիլ :

17 .— Ամէն անդամ իր տեղի Մասնաճիւղին մասնակցելու է : Երբ անդամ մը բանաւոր պատճառունի իր տեղի մասնաճիւղին չպատկանելու, ուրիշ

մասնաճիւղի մը անդամակցելու համար պէտք է ստանայ իր տեղի մասնաճիւղին, կամ՝ դժուարութեան պարագային, կեղը. Վարչութեան հաւանութիւնը:

18.— Ամէն նոր անդամ մասնաճիւղին մէջ ընդունուած պահուն մէկ տոլար մուտք կը վճարէ:

19.— Իրաւասու անդամ կը կոչուին անոնք, որոնք.

Ա. Ամբաստանութեան տակ չեն գտնուիր:

Բ. Ժողովներուն կանոնաւորապէս ներկայ գըտնուած են (բանաւոր պատճառները յարգելով):

Գ.— Տուրքերը ամբողջապէս վճարած են:

ԾԱՆՈԹ.— Իրաւասու անդամները միայն կը նան պաշտօնի կոչուիլ.— Վարչութեան անդամ, պատգամաւոր, դատաւոր, եւայլնի:

Առանց բանաւոր պատճառի մէկ տարուան ընթացքին յաջորդաբար ուր անգամ ժողովէ բացակայողները կը դադրին անդամ ըլլալէ:

20.— Մասնաճիւղը պարտաւոր է առնուազն ամիսը անդամ մը անդամական ժողով գումարել: Ժողովը օրինական կը համարուի, երբ անդամներուն մշտամասնութիւնը ներկայ է, չհաշուելով բանաւոր պատճառով բացակայողները:

21.— Մասնաճիւղի ժողովին կրնայ ներկայ գտնուիլ ուրիշ մասնաճիւղի պատկանող անդամ մը իրեւ հիւր եթէ ժողովը կ'արտօնէ:

22.— Երբ Մասնաճիւղ մը մերժէ յանձնաբարել իր անդամներէն մին ուրիշ մասնաճիւղի մը, իր պատճառաբանութիւնները պարտի ներկայացնել կեղը. Վարչութեան, այդ մասին տեղեկացնելով նաև պատկան մասնաճիւղին:

23. — Մասնաճիւղը իր յանձնարարականներուն մէջ միշտ յիշատակելու է թէ յանձնարարուած անդամը իր պարտքերուն ո՞րքանը վճարած է եւ ո՞րքանը ապառիկ թողած :

24. — Մասնաճիւղը պարտաւոր է իր մէջէն արտաքսուած կամ ոեւէ պատճառով հեռացած անդամին անունը անմիջապէս հաղորդել կեղր . Վարչութեան :

25. — Մասնաճիւղը ջանալու է ըստ կարելւոյն յաճախ դումարել համակրական եւ հրապարակային ժողովներ : Հրապարակային ժողովներուն տեղական ուժերէ դուրս ատենախօսները կը հրաւիրուին կեղր . Վարչութեան միջոցաւ , եւ ճանապարհածախուսը կը վճարուի կեղրոնական գանձէն :

26. — Մասնաճիւղ մը հաւաքաբար պատասխանատու է իր գանձին եւ դոյքին համար :

27. — Մասնաճիւղը պարտաւոր է իր գանձին մէջ հաւաքուած դրամները դրկել երեք ամիսը անդամ մը կեղր . Վարչութեան , սլահելով միայն 20 առ հարիւրը իր տեղական զուտ կազմակերպարական ընթացիկ ծախսերուն համար :

28. — Պատգամաւորական ժողովի դումարումէն մէկ ամիս առաջ մասնաճիւղը պարտաւոր է վըճարած ըլլալ իր բոլոր տուրքերը եւ հաշիւները մանրամասնօրէն ներկայացուած՝ կեղր . Վարչութեան :

29. — Վարչութիւնը յարաբերութեան պաշտօնական կապն է իր մէկ անդամին եւ ուրիշ մարմիններու միջեւ :

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԻ ԻՐԱԻՍՍՈՒԹԻՒՆԸ

30. — Վարչական մարմինը կ'ստանայ եւ կը բանայ մասնաճիւղին անունով եկած նամակները, կը ներկայացնէ մասաճիւղի յաջորդ ժողովին եւ կը վարէ մասնաճիւղին ընթացիկ գործերը :

ԾԱՆՈԹ. — Մասնաճիւղին ուղղուած ամէն պաշտօնական գրութիւն անդամական ժողովի մէջ կը կարդացուի եւ ապա պահ կը դրուի մասնաճիւղի ատենադպիրին քով :

31. — Ստիպողական պարագաներու մէջ միայն երբ հնարաւոր չէ անդամական ժողով գումարել, վարչական մարմինը պէտք է տնօրինութիւն մ'ընէ եւ ներկայացնէ զայն մասաճիւղի յառաջիկայ ժողովին վաւերացնելու համար :

32. — Վարչական մարմնի անդամ, պատգամաւոր, դատաւոր եւայլն, կրնան ըլլալ միայն այն անդամները, որոնք գէթ վեց ամիս գտնուած են անընդհատ Հ. Կ. Խ. ի. տեղական մասնաճիւղին մէջ եւ իրաւասու են յօդուած 19-ի համաձայն :

ԾԱՆՈԹ. — Բացառութիւն կը կազմեն նորակազմ Մասնաճիւղերը :

33. — Կեղր. Վարչութեան անդամ մը, ինչպէս նաեւ զործիչ ընկերուհի մը թեկնածու նկատուելու չեն վարչական մարմնի եւ պատգամաւոր ընտրուելու :

34. — Եթէ վարչական մարմինը անհոգ, թոյլ եւ պարտազանց գտնուի եւ այդ պարագան հաստատուի, մասնաճիւղը կրնայ լուծել զայն մեծամաս-

նութեամբ պաշտօնավարութեան շրջանի լրացումէն առաջ եւ նոր մը ընտրել:

35.— Ատենապետին պարտականութիւնն է մասնաճիւղը ժողովի հրաւիրել, հսկել անոր կարգապահութեան եւ ատենադպրին հետ ստորագրել պաշտօնական թուղթերը: Մասնաճիւղին ինիքը կը պահուի ատենապետին քով:

36.— Ատենադպրիրը կը կատարէ մասնաճիւղին բոլոր գրաւոր գործերը, գանձայինէն զատ, եւ պատասխանատու է մասնաճիւղի բոլոր թղթերու անվըթար պահպանումին: Ատենադպրիրը առնուազն ունենալու է երկու տօմարներ, առաջինին մէջ համառօտիւ արձանագրելու համար մասնաճիւղի ժողովներու ատենագրութիւնները, երկրորդին մէջ՝ մասնաճիւղի անդամներուն անունները, ծննդեան թուականը:

Այս վերջին տոմարին մէջ կ'արձանագրուին անդամներու մասին ծանօթութիւններ (մահ, տեղափոխում, հեռացում, արտաքսում եւն. եւն.):

37.— Գանձապահին պարտականութիւնն է.

Ա. Ստանալ եւ պահել մասնաճիւղի անունով զրկուած կամ գանձուած բոլոր գումարները:

Բ. Կատարել մասնաճիւղի որոշած ծախսերը:

Գ. Ունենալ արկղի տոմար մը, ուր մանրամասնորէն նշանակելու է մասնաճիւղի ելքը եւ մուտքը (հրապարակով կատարուած հանդանակութեան գումարները առանձին արձանագրելու է տոմարին մէջ):

Դ. Ամէն Յ ամիս մասնաճիւղին ելեւմտական հաշիւը ներկայացնել անդամական ժողովին:

Ե. Վարչութեան որոշումով ընթացիկ ծախքերու համար արտօնուած գումարը վար դնելով գան-

ձին մէջ մնացած դրամը զրկել կեղր . Վարչութեան ամէն երեք ամիսը անդամ մը :

38.— Մասնաճիւղի թղթակցութիւնները կը կատարուին սլաշտօնական թղթի վրայ , որ կը հայթայթուի կեղր . Վարչութեան կողմէ , եւ կը ստորագրուին ատենապետին եւ ատենապարփին կողմէ : Գանձային հաշիւնները ստորագրելու է նաեւ գանձապետը :

ԾԱՆՈԹ .— Հասարակ թուղթի վրայ եւ կեղծ անուններով ստորագրուած գրութիւնները կը նկառուին անվաւեր :

39.— Մասնաճիւղի ստացած բոլոր նամակները , չգործածուած անդամատետրերը եւ դրոշմները , ամէն տարեշրջանի վերջը Պատգամաւորական Ժողովի գումարումէն ամիս մասուած կը զրկուին կեղր . Վարչութեան :

ԳՈՐԾԻՉՆԵՐ

40.— Դործիչ կը ճանչցուին այն անդամները , որոնք Պատգամ . Ժողովէն կամ անոր անունով կեղր . Վարչութեան կողմէ կը հրաւիրուին աջակցելու Ամերիկայի Հ . Կ . Խ . -ի տարածման :

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

41.— Հ . Կ . Խ . -ի Ամերիկայի կեղր . Վարչութիւնը կը ներկայացնէ Ամերիկայի Հ . Կ . Խ . -ի մասնաճիւղերու գործադիր իշխանութիւնը :

Ան է Ամերիկայի Հ. Կ. Խ. ի սլաշտօնական ներկայացուցիչը թէ՝ երկրի եւ թէ՝ արտասահմանի Հ. Կ. Խ.-ի մարմիններուն, ինչպէս նաև Հայ եւ օտար կազմակերպութիւններու առջեւ։ Անոր միջոցաւ միայն կրնան կատարուիլ մասնաճիւղերու բոլոր պաշտօնական յարաբերութիւնները վերը յիշուած մարմիններուն հետ։

42.— Կեդր. Վարչութեան պարտականութիւններն են.

Ա. Գործադրել Հ. Կ. Խ.-ի Ամերիկայի Պատգամաւորական ժողովի որոշումները.

Բ. Նոր մասնաճիւղեր կազմակերպելու հետամուտ ըլլալ.

Գ. Մղում տալ մասնաճիւղերու դործունէութեան եւ քննել անոնց հաշիւները.

Դ. Հրապարակային ժողովներու համար ատենախօսներ պատրաստել.

Ե. Հետամուտ ըլլալ, որ մասնաճիւղերու մէջ ծագած ոեւէ խնդիր օրինական ճամբով լուծում գտնէ.

Զ. Շրջաբերականով հաղորդել մասնաճիւղերու՝ կազմակերպութեան դործունէութեան վայրերէն ստացուած լուրեր.

Է. Մասնաճիւղերէն սլահանջել եռամսեայ հաշուեկշիռ եւ տեղեկադիր, այդ մասին պատրաստուած մասնաւոր հարցարաններու միջոցով.

Ը. Իւրաքանչիւր եռամսեայի տեղեկադիրը ամփոփելով հաղորդել մասնաճիւղերուն։

43.— Կեդր. Վարչութիւնը կազմակերպական ոեւէ կարեւոր խնդրի առթիւ, խորհրդակցութեան կրնայ հրաւիրել կարող ընկերներ եւ ընկերուհիներ, երբ հարցի մը մասին կեդր. Վարչութիւնը չի կըր-

նար երկու-երրորդով որոշում տալ եւ փոքրամաս-նութիւնը կը պահանջէ խորհրդակցական ժողով։

44.— Կեդր. Վարչութիւնը կը բաղկանայ եօթը անդամներէ, որոնք կ'ընտրուին Պատգմ. Ժողովին կողմէ, մէկ տարուան պաշտօնավարութեան շրջանով եւ վերընտրելի են։

45.— Կեդր. Վարչութեան ընտրելի կրնան ըլ-լալ միայն այն անդամները, որոնք ընտրութեան օ-րէն առնուազն մէկ տարի շարունակ դտնուած են Կարմիր Խաչի մէջ եւ իրաւասու են։

46.— Կեդր. Վարչութեան ընտրելի չեն կրնար ըլլալ։

Ա. Կաղմակերպական դատական ամբաստանու-թեան տակ դտնուող անդամները։

Բ. Արտաքսուած եւ վերստին ընդունուած ան-դամ մը, եթէ միայն ձեռնհաս ատեանի մը կողմէ իսպառ անպարտ յայտարարուած չըլլայ։

47.— Եթէ Կեդր. Վարչութեան մէկ կամ աւելի անդամները պակսին, Պատգմ. Ժողովին ցանկէն յա-ջորդական առաւելագոյն քուէ ստացողներ կը հրա-ւիրուին մասնակցելու կաղմին. բացառիկ պայման-ներու մէջ միայն, Կեդր. Վարչութիւնը մասնաճիւ-ղերուն կը դրկէ եռանուն ցանկ մը, պակսած անդա-մի ընտրութեան համար։

48.— Եթէ Կեդր. Վարչութեան անդամներու թիւին կէսէն աւելին պակսի, արտակարգ պատգ. ժողով կը դումարուի նոր ընտրութիւն կատարելու համար։

49.— Կեդր. Վարչութիւնը ինք կ'ընտրէ իր դի-ւանը, որ կը բաղկանայ ատենապետէ, ատենապիրէ եւ գանձապահէ, որոնք անդամուհիներ լինելու են։

50.— Ատենապետին պարտականութիւնները.

Ա. Ատենապետել կեղը . Վարչութեան ժողովներուն .

Բ. Ատենադպրին հետ խորհրդակցելով հոգածու ըլլալ , որ կեղը . Վարչութեան որոշումները անթերի եւ անյապաղ գործադրուին :

Գ. Ատենադպրին հետ բանալ եւ կարդալ կեղը . Վարչութեան նամակները .

Դ. Պահել կեղը . Վարչութեան Հայերէն եւ Անդլիերէն կնիքները եւ ստորագրելու կնքել ատենադպրին եւ ի հարկին գանձապահին հետ պաշտօնական բոլոր թուղթերուն տակ :

51.— Ատենադպրին պարտականութիւններն են .

Ա. Կեղը . Վարչութեան ժողովներուն համառօտատենադրութիւնը արձանագրել յատուկ տոմարի մը մէջ , ստորագրել բոլոր պաշտօնական գրութիւններն Ատենապետին հետ :

Բ. Կեղը . Վարչութեան եկած բոլոր գրութիւնները բանալ եւ հաղորդել միւս անդամակիցներուն՝ անոնց կարծիքները խնդրելով .

Գ. Խնամով պահել կեղը . Վարչութեան անունով իրեն յանձնուած բոլոր գրութիւնները Պատգմ . Ժողովին ներկայացնելու համար .


Դ. Գանձապահին ընկալագրերը եւ անոր հասած դրամական գումարները արձանագրել մասնաւոր տոմարի մը մէջ :

Ե. Պատրաստել Պատգմ . Ժողովին ներկայացնելիք տարեկան մանրամասն տեղեկագիրը .

Զ. Կազմել եւ պահել կեղը . Վարչութեան բոլոր գոյքերու ցուցակը :

Քարտուղարի պարտականութիւններն են .

Ա. Գանձային խնդիրներէն զատ՝ Հրջաբերական , նամակ եւայլն պատրաստել .



ՀԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1594

Ա/16463

Բ. Ամերիկայի Հայ Կ. Խաչի մասնաճիւղերուն մանրամասն անդամական ցանկը ունենալ, լրացը-նելով մասնաճիւղերէ ստացուած տեղեկագրերուն վրայ, եւ նշանակել հոն մահերը, հրաժարումները, տեղափոխումները, դադրեցումները եւ արտաք-սումները:

ԾԱՆՈԹ.— Քարտուղարը կեդր. Վարչութեան անդամ չի կրնար ըլլալ. բայց կրնայ մասնակցիլ ա-նոր ժողովներուն խորհրդակցական ձայնով :

Կեդր. Վարչութիւնը կրնայ քարտուղարին փո-խանցել ատենադպրի պարտականութեանց որոշ մասը կամ անոր վրայ դնել նոր պարտականութիւն-ներ ըստ իւր հայեցողութեան :

52.— Դանձապահին պարտականութիւններն են .

Ա. Քարտուղարութենէն ստանալ կեդր. Վար-չութեան անունով եկած բոլոր գումարները եւ ըն-կալագրերը զրկել Քարտուղարութեան միջոցով .

Բ. Դրամ յանձնել, զրկել եւ ծախքեր ընել կեդր. Վարչութեան գրաւոր որոշումով վաւերաց-ուած ատենապետի եւ ատենադպրի ստորագրու-թիւններով .

Գ. Տոմարի մը մէջ կանոնաւորապէս եւ մանրա-մասնօրէն արձանագրել կեդր. Վարչութեան ելեւ-մուտքը .

Դ. Իր կատարած վճարումներուն եւ ծախքե-րուն ընկալագրերն ու արդարացուցիչ վաւերա-թուղթերը պահել իր քով :

Ե. Կեդր. Վարչութեան պարբերաբար ներկա-յացնել իր արկղին հաշիւը :

53.— Կեդր. Վարչութիւնը հաւաքար պա-տասխանառու է դանձապահին յանձնուած բոլոր

գումարներուն համար եւ հետեւաբար ազատ է դանձին ասլահովութեան համար ընել իր անհրաժեշտ սեպած կարգադրութիւնները :

ԾԱՆՈԹ. — Ապահովութեան լաւագոյն միջոցն է գանձապահը եւ ֆարտուղարը դնել երաշխաւորութեան տակ, կամ կեդր. Վարչութենէն որոշուած երկու անձերու ստորագրութեամբ միայն կարելի լինի ֆուկարկուած ռեւէ գումար հանել դրամատունէն :

54. — Կեդր. Վարչութիւնը պարտաւոր է իր բոլոր հաշիւնները, ինչպէս նաև բոլոր գրութիւնները, Պատգմ. Ժողովին օրը բերել դնել պատկան յանձնախումբերու տրամադրութեան տակ :

55. — Կեդր. Վարչութիւնը պարտաւոր է Պատգ. Ժողովի գումարումէն երկու ամիս առաջ,

Ա. Հաղորդել բոլոր մասնաճիւղերուն Պատգ. Ժողովի գումարման օրն ու տեղը :

Բ. Պահանջել մասնաճիւղերէ վեցամսեայ եւ իրենց տարեկան հաշուեկչիոնները ու տեղեկագիրները :

Գ. Պահանջել, որ տուրքերու հաշուէն ապառիկ ունեցող մասնաճիւղերը փութան իրենց հաշիւնները փակել եւ դրամը հասցնել կեդր. Վարչութեան :

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԴԷՄ ՑԱՆՑԱՆՔՆԵՐ

56. — Կազմակերպութեան դէմ յանցաւոր կը նկատուի այն ընկերուհին, որ .

Ա. Կ. Խաչի կարգապահութեան դէմ անսաստող ընթացք մը կը բռնէ :

Բ. Մասնաճիւղի մը ներքին գործերու մասին
ուրիշներու կը խօսի :

Գ. Գոեհիկ կամ անպատշաճ լեզու մը կը գոր-
ծածէ ժողովներու մէջ :

Դ. Դիտմամբ կը խանդարէ ժողովը կամ ան-
պատշաճ վարմունք մը կ'ունենայ հոն :

Ե. Կեղր. Վարչութեան կամ Պատգ. Ժողովի
տեղեկութիւններն ու որոշումները, որոնք այդ մար-
միններուն մէջ մնալ սահմանուած են, կը հաղորդէ
այդ մարմիններէն դուրս դտնուող անդամներու :

Զ. Գիտակցարար երեսի վրայ կը ձգէ կամ կը
մերժէ կատարել իրեն յանձնուած պաշտօն մը :

Է. Կազմակերպութեան անունը չարաչար կը
գործածէ դրամական շահու համար :

Ը. Հ. Կ. Խաչի պատկանող ոււէ գումար կամ
ինչք կ'իւրացնէ եւ կամ չարաչար կը գործածէ :

57.— Երբ մասնաճիւղ մը Կ. Խաչի վնասակար
ընթացքի մը մէջ կը դտնուի, դատի կ'ենթարկուի
կեղր. Վարչութեան կողմէ, որ իրաւունք ունի այդ
մասնաճիւղը դադրեցնելու մինչեւ Պատգ. Ժողովի
օրը :

58.— Պատգ. Ժողովի որոշումով մասնաճիւղ մը
կրնայ լուծուած հոչակուիլ, եթէ հակառակ կը
գործէ Կ. Խաչի կանոնագրին կամ ծրագրին, եթէ
մինչեւ տարի մը անընդհատ անդամական ժողով
չունենար կամ չի վճարեր իր տուրքերը :

59.— Երբ կեղր. Վարչութեան անդամներէն
մէկը գեղծում կը գործէ, ընկերական ատեանի կը
հրաւիրուի, որը կը կազմեն կեղր. Վարչութեան
բոլոր միւս անդամները, եւ մերձաւոր մասնաճիւ-
ղերու մէկ մէկ ներկայացուցիչները, հաւասար ձայ-

նով : Ատեանը լիազօր է պաշտօնանկ ընելու ամբաստանուածը :

60. Երբ Կեդր. Վարչութիւնը պարտազանց կամ ապօրինի ընթացքի մը մէջ կը գտնուի, ամէն մասնաձիւղ անկէ բացատրութիւն կրնայ պահանջել :

ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՒ ՆԿԱՏԻ ԱՌՆԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԻ

61.— Ամէն բողոք՝ ոեւէ անդամի, անդամներու եւ կամ մարմնի դէմ՝ զրաւոր կերպով կը ներկայացուի պատկան մարմինի օրինաւոր ժողովին : Ներկայացուած բողոքը ներկաներու կէսէն մէկ աւելի քուէով նկատի կ'առնուի :

62.— Պատիժներ չորս կարգի են .

Ա. Յանդիմանութիւն .

Բ. Քուէէ զրկում .

Գ. Դրամական տուղանք .

Դ. Արտաքսում :

63.— Թեթեւ յանցանքներու համար ատենապետը ժողովի ընդհանուր կարծիքը առնելէ յետոյ՝ համապատասխան որոշում կը պահանջէ : Ծանր յանցանքներու համար ժողովի ընդհանուր կարծիքը լսելէ վերջ՝ ատենապետը կը պահանջէ որ, բաց քուէով ընտրուի 3-5 անդամ ունեցող դատական յանձնախումբ մը . (դատ. յանձնախումբի անդամները պէտք է ազատ ըլլան դատին հետ ոեւէ կապ ունենալէ) :

64.— Դատական յանձնախումբին յանձնուած դատը կը քննուի մասնաճիւղի ժողովէն դուրս եւ

արդիւնքը գրաւոր կերպով կը ներկայացուի յաջորդ ժողովին :

65.— *Շահագրգոռող կողմերը ներկայ կ'ըլլան քննութեան՝ իրենց տեսակէտները պարզելու եւ, ի պահանջել հարկին, յանձնախումբին տալու հարկ եղած փաստերն ու տեղեկութիւնները։ Յանձնախումբը երկու կողմերը, ինչպէս նաեւ վկաները լսելէ յետոյ, առանձինն կուտայ իր վճիռը։*

66.— *Դատական յանձնախումբի վճիռները կ'անցնին մեծամասնութեան քուէով եւ կը վաւերացուին կամ կը մերժուին մասնաճիւղին կողմէն։*

67.— *Եթէ ամբաստանեալը կամ բողոքարկուն բացակայի (բանաւոր բացակայութիւնը գրաւոր կերպով եւ ժամանակին հասցնելու է պատկան մարմինին) դատական յանձնախումբը կը շարունակէ դատավարութիւնը եւ կ'արձակէ իր վճիռը։*

68.— *Ուեէ անդամ որ դատ։ յանձնախումբին կողմէն կը հրաւիրուի վկայութիւն կամ տեղեկութիւն տալու, պարտաւոր է ներկայանալ ատեանին եւ զոհացում տալ եղած հարցապնդումին, հակառակ պարագային յանցաւոր կը նկատուի։*

69.— *Պատիժը (յանդիմանութիւն, քուէէ զրբկում, դրամական տուգանք եւ արտաքսում) գրաւոր կը պատրաստուի եւ մասնաճիւղի ժողովին մէջ դատապարտուած անդամին ներկայութեան կը կարդացուի։ Եթէ անդամը խոյս տայ, որոշուած օրը ներկայանալէ եւ պատիժը լսելէ, կը զրկուի կ. Խաչի անդամական իրաւունքներէն, մինչեւ որ օրինական պատժին ենթարկուի։*

ԲՈՂՈՔ ԴԱՏԱՎՃՌԻՆ ԴԵՄ

70.— Մասնաճիւղի մը դատավճռին դէմ եղած բողոքը կ'ուղղուի կեղը. Վարչութեան: Բոլոր բողոքները պէտք է ներկայացնել դատավճիռը հաղորդելու օրէն առ առաւելն ամիս մը ետքը:

71.— Բողոքարկուն իր բողոքագիրը կ'ուղղէ մասնաճիւղին, որ այդ գրութիւնը դատին վերաբերեալ բոլոր թուղթերուն հետ կը զրկէ կեղը. Վարչութեան: Մասնաճիւղը պատասխանատութեան կ'ենթարկուի եթէ բողոքը ստանալէ ետք մինչեւ եօթ օր բոլոր վերոյիշեալ գրութիւնները չի յանձնէ պատկան մարմնին: Մասնաճիւղին վճիռը պարտաւորիչ է մինչեւ չբեկանուի կեղը. Վարչութենէն:

72.— Եթէ ոեւէ կազմ ուզէ բողոքել կեղը. Վարչութեան վճիռին դէմ, պէտք է դիմէ Պատգ. Ժողովին:

73.— Պատգ. Ժողովի դատական յանձնախումբին առջեւ կը հրաւիրուին երկու կողմերը այն ատեն միայն, եթէ բողոքագիրը պատճառաբանուած ըլլայ, թէ դատավարութեան մէջ անկանոնութիւն, թերութիւն կամ աչառութիւն տեղի ունեցած է: Յանձնախումբին առջեւ նոր դատ տեղի չկրնար ունենալ, այլ կրնայ խօսուիլ ու վիճուիլ միմիայն բողոքին վերոյիշեալ կետերը ապացուցանելու համար եւ ուրիշ ոչինչ:

74.— Դատ. յանձնախումբը իր եզրակացութիւնները կ'ենթարկէ Պատգ. Ժողովի վաւերացումին եւ կը յանձնաբարէ հարկաւոր դատածը: Պատգ. Ժողովի որոշումը պաշտօնապէս կը հաղորդուի

Կեդր. Վարչութեան կողմէ պատկան մասնաճիւղին՝
ի գործադրութիւն:

ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄ

75.— Ոււէ անդամ, որ մասնաճիւղէ մը հեռաց-
ուած է ոչ-բանաւոր պատճառներով կամ իր տուր-
քերը չի վճարելուն համար, կրնայ նորէն ընդուն-
ուիլ, կանխիկ վճարելով իր բոլոր պարտքը, ապա
թէ ոչ կը նկատուի նոր անդամ:

76.— Դատավճիոէ մը խուսափելու համար
հրաժարած անդամները չեն կրնար վերստին ընդու-
նուիլ մինչեւ չենթարկուին իրենց մասին տրուած
վճիոին:

77.— Մասնաճիւղը կրնայ, երբ՝ նոր վկայու-
թեան մը, կամ մեղմացուցիչ պարագայի մը հանդէպ
դտնուի, կամ ժամանակ անցնելէ ետք դադրեցումի
տեւողութիւնը չափազանց համարէ, քուէներու եր-
կու երրորդի առաւելութեամբ՝ վերջ տալ դադրե-
ցումին եւ դատապարտուած անդամը ներս ընդու-
նիլ՝ լուր տալով կեդր. Վարչութեան:

ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

78.— Ամերիկայի Հ. Կ. Խաչի Պատգ. Ժողովը
Հայ կարմիր Խաչի օրէնսդրական, վարչական,
դատական եւ ներկայացուցչական դերագոյն մար-
մինն է Ամերիկայի մէջ եւ կը գումարուի պարբերա-
բար տարին անդամ մը:

79.— Արտակարգ Պատգ. Ժողով կը գումարուի.

Ա. Երբ Կեդր. Վարչութիւնը արտակարգ եւ ստիպողական գործի մը համար բոլոր մասնաճիւղերու խորհրդակցութիւնը եւ հաւաքական տնօրինութիւնը անհրաժեշտ կը զտնէ .

Բ. Երբ Մասնաճիւղերու կէսէն առ նուազն մէկ աւելի հարկ կը տեսնեն .

Գ. Երբ Կեդր. Վարչութիւնը կը կազմալուծուի :

ԾԱՆՈԹ. — Կեդր. Վարչութեան առ նուազն չորս անդամները կը պատրաստեն Պատգ. Ժողովի հրաւերը :

80. — Պատգ. Ժողովը կ'ընտրէ պատգամաւորներ Հայ կ. Խաչի Բնդհանուր Պատգամաւորական Ժողովին մասնակցելու՝ յանուն Ամերիկայի Հայ Կարմիր Խաչին :

81. — Պատգ. Ժողովը կ'ունենայ այլեւայլ յանձնախումբեր ըստ հարկին — Դատական, Հաշուեքննիչ, Օրակարգի, Վերաքննիչ — որոնց գործելու եղանակը ճշդուած է Պատգ. Ժողովի ներքին կանոնագրութեամբ :

82. — Պատգ. Ժողովը կ'ստանայ Կեդր. Վարչութեան համարատուութիւնը, եւ հնարաւոր տնօրինութիւնները կ'ընէ պարտազանց մարմիններու եւ պատասխանատու անդամներու նկատմամբ :

83. — Պատգ. Ժողովը կ'ընտրէ Կեդր. Վարչութիւնը, եռապատիկ ցանկի մը վրայէն, դադտնի քուէարկութեամբ եւ քուէներու մեծամասնութեամբ :

Քուէարկութենէն առաջ իւրաքանչիւր ընտրելիի մասին խորհրդակցութիւն կը կատարուի եւ կարծիքներ կը յայտնուին ընտրելիին բացակայութեանը :

84.— Պատգ. · Ժողովին որոշումները պարտաւորիչ են բոլոր մասնաճիւղերուն համար :

85.— Պատգ. · Ժողովին դէմ իւրաքանչիւր բողոք յաջորդ Պատգ. · Ժողովին միայն կրնայ ներկայացնուիլ :

86.— Ամէն մասնաճիւղ կը մասնակցի Պատգ. · Ժողովին իր իրաւասու անդամներու թիւին համեմատութեամբ : Օրինական թուի վրայ իւրաքանչիւր 50 անդամի համար մէկ ձայնի յաւելում կ'ունենայ մասնաճիւղը : Այսպէս, 5 անդամ ունեցող մասնաճիւղը՝ մէկ ձայն, 51-100 անդամ ունեցողը՝ 2 ձայն, 101-150 անդամ ունեցողը՝ 3 ձայն, եւայլն :

87.— Իրաւասու են այն մասնաճիւղերը, որոնք վճարած են իրենց կազմակերպական տուրքին երեք չորրորդը եւ մէկ չորրորդին համար ալ մանրամասն տեղեկութիւններ կուտան կեդր . Վարչութեան՝ Պատգ. · Ժողովի գումարումէն մէկ ամիս առաջ :

88.— Հեռաւոր այն մասնաճիւղերը, որ 51 կամ աւելի անդամներ ունին եւ այս կանոնագրի տրամադրութիւններուն գոհացում կուտան, իրաւունք ունին զրկելու իրենց թիւին համաձայն պատգամաւորներ, պայմանաւ որ ծախսը 40 տոլարէն աւելի չըլլայ, հակառակ պարագային տեղին վրայ կ'ընեն բացառիկ կարգադրութիւն :

89.— Հեռաւոր մասնաճիւղերը կրնան Պատգ. · Ժողովին ներկայացուցիչ նշանակել տարբեր վայրերէ, եթէ ոեւէ պատճառով իրենք չեն զրկեր պատգամաւոր :

ԾԱՆՈԹ .— Եթէ նշանակուած պատգամաւորը ուրիշ տեղէ մը արդէն ընտրուած է, ոեւէ կերպով չի կրնար ընտրելի ըլլալ, եւ Պատգ. · Ժողովը իրաւունք ունի այդ ձայնը ուրիշի մը տալու :

90. — Պատգ. Ժողովին չեն կրնար մասնակցիլ այն մասնաճիւղերը, որոնք իրենց տարեկան տուրքը կանխաւ չեն վճարած :

Տուրքին մէկ մասը միայն վճարած մասնաճիւղերու պատգամաւորները կը մասնակցին Պատգ. Ժողովին՝ խորհրդակցական ձայնով :

91. — Այն նորակազմ մասնաճիւղերը, որոնց վաւերացումը Պատգ. Ժողովի գումարման օրէն գէթ երեք ամիս առաջ տեղի ունեցած չէ, չեն կրնար մասնակցիլ Պատգ. Ժողովին :

92. — Պատգամաւոր կրնան ընտրուիլ միայն այն անդամները, որոնք առնուազն վեց ամիս իրաւասու անդամ եղած են եւ առնուազն երեք ամիս դժոնուած են նոյն մասնաճիւղին մէջ :

93. — Իւրաքանչիւր պատգամաւոր միայն մէկ քուէ կրնայ ունենալ եւ մէկ մասնաճիւղ ներկայացընել: Բայց հեռաւոր մասնաճիւղերը, եթէ ծախքերը նկատի ունենալով չկրնան իրենց թուի համե. մատութեամբ ներկայացուցիչ դրկել, կրնան իրենց ձայնը տալ ուրիշի մը ուղղակի կամ Պատգ. Ժողովի միջոցաւ :

94. — Կեդր. Վարչութիւնը հաւաքաբար մէկ քուէով կրնայ մասնակցիլ Պատգ. Ժողովին, այդ իրաւունքը յանձնելով իր անդամներէն մէկին :

Կեդր. Վարչութեան միւս անդամները կրնան օդտուիլ ձայնի իրաւունքով միայն այն պարագային, երբ իրաւասու մասնաճիւղեր անոնց կուտան իրենց ձայնը :

95. — Կեդր. Վարչութեան բոլոր անդամները ձեռնպահ կը մնան վարչութեան գործերու մասին քուէարկութիւն կատարուելու պարագային :

96. — Պատգամաւորներու մեծամասնութեան

ներկայութիւնը օրինական կը սեպուի Պատգ. Ժողովը բացուած յայտարարելու որոշուած օրը եւ որոշուած ժամուն :

97.— Պատգ. Ժողովը միայն կրնայ փոփոխութիւններ ընել այս կանոնագրին մէջ :

Սոյն կանոնագրի ոեւէ յօդուածը փոփոխելու կամ ջնջելու մասին ամէն առաջարկ, ինչպէս նաև անուղղակի կերպով նոյն նպատակին ձգտող ամէն նոր առաջարկ, պատճառաբանութիւններով մէկտեղ կը ներկայացուի կեղրոնական Վարչութեան ամենէն ուշ՝ Պատգ. Ժողովէն երեք ամիս առաջ, որպէս զի կեղր. Վարչութիւնը Պատգ. Ժողովին ներկայացուելիք հարցերուն ցանկին մէջ դնելով զանոնք, ներկայացնէ մասնաճիւղերու քննութեան :

Առանց այս ձեւականութեան, ուղղակի Պատգ. Ժողովին բերուած կամ հոն յարուցուած այդպիսի առաջարկներ նկատի չեն առնուիր, այլ կը յանձնուին նորընտիր կեղր. Վարչութեան, որ յաջորդ Պատգ. Ժողովին Ենթարկէ պատշաճ եղանակով :

ԿԱԶՄԱԼՈՒԾՈՒՄ

98.— Ամերիկայի Հայ Կ. Խաչը լուծուած կը համարուի երբ իր մասնաճիւղերու թիւը երեքէն պակաս է, կամ ընդհանուր դործօն անդամներու թիւը երեսունի չի հասնիր :

Լուծման պարագային ընկերութեանս պատկանած դրամ, գոյք եւ ամէն ինչ կը դրկուի.

Ա. Երկրի եւ արտասահմանի Հայ Կարմիր Խաչերու Բնդհ. Պատգ. Ժողովներէ ընտրուած կեղրոնական Մարմնոյն :

Բ . Առաջնոյն չգոյութեան պարագային Հայ ազ-
դը ներկայացնող քաղաքական իշխանութեան կամ
պետութեան :

Գ . Վերոյիշեալներու չգոյութեան պարագային
միայն Ամենայն Հայոց Կաթողիկոսին :

Վ Ե Ր Զ

